

Եթե կերպարանափոխվելու և ամենքին նմանակելու կարողականությամբ օժտված մարդն ինքը գա մեր պետություն՝ ցանկանալով ցույց տալ իր ունակությունը, մենք կխոնարհվենք նրա առաջ...բայց կհայտնենք, որ իր նմանը մեր պետության մեջ գոյություն չունի, որ այստեղ անթույլատրելի է այդպիսին դառնալ և կուղարկենք նրան մեկ այլ պետություն...<sup>1</sup>:

Պլատոն

**ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԶԱՆՔԻ 20-ԱՄՅԱ ՈՂԻՍԱԿԱՆՆԸ  
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ\***

Գ. (Թ) ԳԿՄԻՆ-ՆԵՎԿԵՐՆԵՐԸ, 2011

ՎԵՄ ԽԱՆՏԱԿԻՎԱԿԱՆ ԽԱՆՏԵՆ

Որքան էլ մեզանում շարունակվեն բանավեճերը արդեն իր 20-ամյակը բոլորած Հայաստանի Հանրապետության անկախության քաղաքական ու տնտեսական բովանդակության շուրջ, որքան էլ փորձեր արվեն այն դիտարկել բացարձակի ու հարաբերականի հակադրության տիրույթում, այդպես էլ հնարավոր չի լինի գիտական անհրաժեշտ խորությամբ քննության ենթարկել նման բազմաշերտ երևույթը, եթե մեր մեծագույն ձեռքբերումը չզնահատվի նախ և առաջ՝ իբրև **կամային ակտ**:

Ինչպիսին էլ լինի Հայաստանի Հանրապետության ինքնուրույնության չափը, ակնհայտ է, որ մեր երկրի անկախությունը որպես միջազգային-իրավական կարգավիճակ՝ **սուվերենություն**, նվազեցրել է այլոց կամքի մեջ դրսևորվող սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը, բայց մեծացել է մեր կախվածությունը օբյեկտիվ իրողություններից՝ ժամանակից ու տարածությունից: Ուրեմն անկախությունը ենթադրում է կրկնակի պատասխանատվություն՝ սեփական կամքի գերակայության ապահովման և օբյեկտիվ դժվարությունների հաղթահարման համար: Նման կարգավիճակը **քաղցր** է այնքանով, որքանով դառնում է պետականորեն հետապնդվող ազգային նպատակների մարմնավորումը և ընդհակառակը՝ **դառն** է այնքանով, որքանով դրանք բացակայում են:

Այստեղից էլ բխում է արդեն իր 20-ամյակը բոլորած մեր անկախ պետականության անցած ողորմ գնահատման չափանիշը՝ **նպատակային քաղաքականության** առկայությունը ՀՀ հաջողական իշխանությունների մոտ: Միայն նպատակների առաջադրման, քայլերի պլանավորման և արդյունքների հաշվառման գործընթացն է նորանկախ պետության քաղաքականությունը տարբե-

\* Ընդունվել է տպագրության 25.09.2011:

1 Платон, Государство, кн. 3, 398, «Сочинения в трех томах», т. 3, ч. 1, М., «Мысль», 1971, с. 180.

րում իշխանության առօրեական գործառույթներից, որովհետև դրանով ազգի նվիրական **երազանքը** վերածվում է առարկայական ու անշրջելի **իրականության**:

Հայտնի է, որ իր ձևավորման արշալույսին Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրված փաստորեն **միակ շոշափելի** ռազմավարական նպատակը Լեռնային Ղարաբաղի ազատագրության և առաջին հերթին՝ նրա բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովման առաջադրանքն էր, որի իրականացմանն ի սպաս դրվեց պետական մեքենայի տարբեր օղակների և գրեթե ոչնչից ստեղծված Հայոց բանակի ողջ եռանդն ու կորովը: Եվ այսօր՝ 20-ամյա հեռավորությունից նույնպես, այս խնդրի լուծման բարեհաջող ընթացքը եղել ու մնում է 20-ամյա Հայոց պետականության շոշափելի, բայց դեռևս չամրագրված ձեռքբերումը: Իսկ ինչ մնում է երկրի Սահմանադրության մեջ ընդհանուր գծերով արձանագրված մեր **համամարդկային** նպատակներին՝ ժողովրդավարական, իրավական ու սոցիալական պետության կառուցմանը, ապա թեև 20 տարիները բավարար ժամանակ էին դրանց իրականացման համար, բայց կոնկրետ արդյունքների առումով անցումը սեփականատիրական նոր հարաբերություններին հանգեցրել է հռչակված արժեքներին հակասող պետաքաղաքական համակարգի ձևավորմանը:

Անշուշտ, բացի վերը նշվածից, անցած 20 տարիներին մեզանում առաջադրվել են մեր ցանկությունների ու երազանքների բազմաթիվ այլ բանաձևումներ, բայց առավելապես՝ տեսական ու կարգախոսային մակարդակներում: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ Ղարաբաղյան պատերազմը զինադադարով փոխարինած՝ 1994 թ. մայիսյան համաձայնագրի ստորագրումից հետո, գործնական-քաղաքական գետնի վրա, փաստորեն, մենք որևէ **լուրջ, էական և շոշափելի ռազմավարական նպատակ** չենք առաջադրել և իրականացրել մինչև վերջ: Մինչդեռ, երբ չկա ազգային նպատակը, ապա պետությունը՝ որպես դրա իրականացման միջոց, աստիճանաբար տարվում է ցանկացած **համակարգին** բնորոշ ինքնաբավարարման գործառույթով: Ուրեմն՝ ո՞վ է մեղավորը՝ պետությունը, թե՞ հասարակությունը, թերևս, երկուսը միասին, քանզի ազգային շահերի վերածվող՝ պետության գիտակցված պահանջումներին ձևավորումը «երկկողմանի երթևեկություն» է, ուստի երբ իր անկախությունը հռչակած ազգն ի վիճակի չի լինում հասնել համապատասխան **գիտակցության** ու **կազմակերպվածության**, ապա պետությունն իբրև համակարգ, դուրս է գալիս նրա վերահսկողությունից: Առավել ևս՝ մեր պարագայում, երբ այն, ըստ էության, խորհրդային անվերահսկելի **ապարատի** բեռից դեռևս չի էլ ազատվել:

Ուստի պատահական չէ, որ եթե անգամ անցած 20-ամյակի ընթացքում մեզանում ռազմավարական տարողության ինչ-ինչ խնդիրներ են առաջադրվել սոսկ գործադիր իշխանության մակարդակի վրա, ապա դրանց իրականացումը վաղ թե ուշ ձախողվել է: Այսպես՝ երկրի հաջորդական իշխանություններին միշտ էլ հուզել է Հայաստանի **շրջափակումը վերացնելու** հարցը, որը կապվել է մեկ՝ աբխազական երկաթուղու գործարկման, մեկ՝ Թուրքիայի հետ ունեցած երկաթգծի շահագործման, մեկ՝ դեպի Իրան երկաթուղի կառուցելու հնարավորությունների հետ, որոնցից **առաջինի** վրա դրված հույսը եղել է սխալ հաշվարկի արդյունք, **երկրորդինը**՝ վտանգավոր խաբկանք, իսկ ահա **երրորդը**, լինելով 20 տարում միանգամայն իրականանալի առաջադրանք, ձախողվել է նպատակային քաղաքականության բացակայության պատճառով: Նույնը կարելի է ասել 1998-ից հետո

առաջադրված՝ պատերազմում պարտված հակառակորդին **տնտեսական հարթության վրա** հաղթելու նպատակի մասին, որը կատարելապես ձախողվել է, բայց ոչ թե Ադրբեջանում նավթի կամ գազի առկայության, այլ Հայաստանում որակական ռեսուրսների վրա հիմնված տնտեսության կառուցման կարգախոսներից այն կողմ չանցնելու պատճառով:

Մեր նպատակների բանաձևման և դրանք խոսքից գործի վերածելու հանգրվաններից յուրաքանչյուրում արձանագրված նման տեղապտույտները առաջ են բերել հավաքականության զգացողության դանդաղ կորստյան և ազգային-բարոյական արժեքների անկման **փաստը**: Վերջինիս ամենացայտուն դրսևորումը կառավարող ընտրախավեր դառնալու հավակնություն դրսևորած տարբեր շերտերի հետևողական և անշեղ կոռումպացումն ու ապահի-տելեկտուալացումն է՝ գավառականացման միջոցով: Որովհետև եթե ազգովին լուրջ նպատակներ չենք դրել մեր առջև և չենք պայքարել դրանց իրականացման համար, իսկ առաջ եկած խնդիրների լուծումն էլ հիմնականում ձախողել ենք, ապա այդ որտե՞ղ էին «կոփվելու» ընտրախավի վերածվելու հավակնորդները, որտե՞ղ էին մաքրվելու իրենց պատող «ժանգից»: Երբ նպատակի ու կամքի բացակայությունը հանգեցրել է իրականության հետ հաշտվելու մտայնությանը, բնական է, որ ծաղկել է կոռուպիան, ամենաթողությունը և սկիզբ է առել արտագաղթը...

Այս ամենի արդյունքում անկախ Հայաստանում հաստատվել է պետականագուրկ հային բնորոշ անհատապաշտության գերակայությունը՝ պետականության գաղափարի մեջ մարմնավորվող հավաքական նպատակների հանդեպ, ինչն անցած 20 տարիների ընթացքում հանդես է եկել հիմնականում երկու զուգահեռ գործառույթների տեսքով.

**առաջինը** որևէ զապաշապկի՝ օրենքների ու բարոյական նորմերի գոյությունն անտեսող պաշտոնյաների ու մեծահարուստների ամենաթողությունն է անձնական ու խմբակային շահերի իրացման տիրույթում,

**երկրորդը** այդ ամենը քողարկելու և անկախ պետականության մեր **ազգային երազանքի** շուրջ նմանակումներով (իմիտացիաներով) զբաղվելու գործընթացն է, որը մանավանդ վերջերս, անկախության 20-ամյակի հետ կապված, ձեռք է բերել համընդհանուր բնույթ և դարձել է մի սովորական թատերախաղ, որը մենք կանվանենք **անկախության քառորդ**:

**Տեղեկանք-1:** Մեր ազգային ու համամարդկային նպատակների շուրջ բեմադրվող ներկայացումները, որոնց սկանալիտն ենք դառնում մենք այսօր՝ անկախ Հայաստանում, սկանալից սրիպում են վերհիշել այն իրողությունը, որ շուրջ 2000 տարուց ավելի պատմություն ունեցող **հայ քաղաքները** լուրջ դերակատարություն է ունեցել հայի ինքնության ձևավորման գործում: Դրա հետևանքով քաղաքական պահվածքի միջոցով սեփական նպատակների քողարկումը ինչպես միջնադարում, այնպես էլ նոր ժամանակներում դարձել է մեր ազգային բնավորության հարկանշական գծերից մեկը: Նոր ժամանակներում, երբ մենք ունեցանք պրոֆեսիոնալ քաղաքներ, թվում էր, թե վերջապես որոշակի սահման կդրվի պոլսական «հոսոսությունների» ու թիֆլիսյան «քամաշաների» առջև, քանզի նրանց «հերոսները» հնարավորություն կունենան «հիանալ» իրենց կերպարները բեմերում անմահացնող դերասանների խաղով: Սկզբում այդպես էլ տեղի էր ունենում, երբ օրինակ՝ Գաբրիել Սունդուկյանի անմահ կերպարների իրական նախադրյալները համախ ներկա էին լինում իրենց նվիրված պիեսների բեմականացումներին: Սակայն խորհրդային տարիներին, երբ սունդուկյանների ու պարոնյանների հեղինակները զրկվեցին մեր «ազգային ջոջերին»

2 Ավելի մանրամասն տես «Վեմ»-ի ներկա համարում հրապարակվող Արամ Գ. Ալեքսանյանի հոդվածը:

ազապորեն երգիծելու հնարավորությունից, իսկ երկրի նոր վերնախավի շրջանում մեծացավ իդեալի ու իրականության հակաթեզը, անանակումային գործելակերպը նորից սկսեց ծաղկում ապրել և իր քարձրակերին հասավ բրեժնևյան «լնացման» շրջանում:

Ղարաբաղյան շարժումն ու անկախության առաջին փորհները իրենց հետ բերեցին քաղաքական գործունեության քարտեղականացման նոր օրինակներ, սակայն պարերազմի դաշնություններն ու անկախության դժվարությունները հետին պլան մղեցին դրանք բեմականացնող **նոր դերասաններին**: Բայց 1990-ականների կեսերից՝ երկրի պետական մեքենայի կարծրացման և «կոմսոմոլի» հին կադրերի սկզբնական հետ միասին, մեզանում վերակալեցին քաղաքական ու պետական գործունեության քարտեղականացումները, կամ ինչպես ժողովուրդն է ասում՝ «բլեֆները»: Եվ եթե սկզբնական շրջանում դրանք իրականացվում էին նախընտրական «շոու»-ների բեմականացման նպատակով, ապա արդեն 2000-ական քվականների կեսերից՝ արտաքին ու ներքին մարտահրավերների մեծացման և դրանց դիմակայելու պարասիսանարվորության բացակայության պայմաններում, Հայաստանի իշխող վերնախավը սեփական «գործունեության» քարտեղականացումն առօրյա երևույթ դարձրեց:

Ուստի անկախության 20-ամյակի հետ կապված՝ աննախադեպ թափով բեմականացվող **անկախության քատրոնը** իրականացնում է մեր բոլոր այն **երազանքների** ու **նպատակների** նմանակումը, որոնք մինչ օրս պահպանում են իրենց գրավչությունը հասարակության որոշակի շերտերի մոտ: Դրանք կարելի է բաժանել երկու խոշոր խմբի. **առաջին**, ազգային հիշողության և հայության դարավոր երազանքների շահարկումը՝ պատմության ընթացքում դրանց մարմնավորումը դարձած նպատակների, արժեքների և անհատ հերոսների կերպարների նմանակման ու գռեհկացման (պրոֆանացիայի) միջոցով, **երկրորդ**, Հայաստանի քաղաքական և տնտեսական առաջադիմության թեմայով պարբերաբար կազմակերպվող բեմականացումները՝ **համամարդկային գաղափարների** արժեզրկման ու վարկաբեկման միջոցով: Սկզբում ոչ միշտ նկատելի այս երևույթը՝ **անկախության քատրոնը**, ներկայումս այնքան փարթամորեն է ծաղկել մեր իրականության մեջ, որ իր ջրապտույտի մեջ է ներառել Հայաստանի օրենսդիր, դատական ու մանավանդ գործադիր իշխանության գրեթե բոլոր օղակները, պատեհապաշտ «մտավորականներին» և հասարակության դյուրահավատ մասին: **Այսօր Հայաստանի Հանրապետությունում գործունեության կոնկրետ ոլորտների մեծ մասի վերահսկողությունն իրականացվում է անճանաչ շահերի բավարարման և հավաքական նպատակների քատերականացման միջոցով:**

**Տեղեկանք-2:** Այս երևույթի ամենապիպակական դրսևորումը ՀՀ կառավարության գործունեությունն է, որն այլևի շար **տեսական սեմինար** է հիշեցնում արդի համաշխարհային փնտրության զարգացման հիմնախնդիրների շուրջ: Իսկ երբ գործադիրը **տեսաբանում է**, հասկանալի է, որ մնացածները պետք է **փիլիսոփայեն** նրանից հետ չննալու համար: Ուստի պարասիսական չէ, որ Հայաստանի կառավարության նիստերը պարբերաբար վերածվում են ազգի հիմնական առավելության՝ մարավոր ներուժի օգտագործման շուրջ քարտեղականացվող դիսկուրսների, մոռանալով, որ հենց այդ պետական մարմնի վրա է դրված նման ընդհանուր դրույթների կոնկրետացման և իրականացման գործը: Այլևի՛ն իրար հետևից փապալելով ինովացիոն գործունեության ասպարեզում ընդունված որոշումները, այս ներկայացման բեմադրիչները թերևս հույսեր են փայլախալում, որ մեր հանրությունը չի նկատի այն իրողությունը, որ շուրասելուկի նման կրկնվող՝ գիտության զարգացման ու նորագույն տեխնոլոգիաների ներդրման առաջադրանքը կարարելապես չսխտողվել է **հենց իրենց իսկ կողմից** սեփական պարտականությունների կարարումը քարտեղականացմամբ փոխարինելու պարանառով:

3 Ավելի մանրամասն տես «Վեմ»-ի ներկա համարում հրապարակվող Մերուժան Վ. Միքայելյանի ընդարձակ ուսումնասիրությունը:

Հայաստանի կառավարությանը համակամ «թարերական փեմերը» փոխանցվել է նաև կոնկրետ ոլորտների համար պարասիսանարու ՀՀ նախարարներին, որոնք թարերականացումների բազում փայտորիչ օրինակներ են մարտուցում արդյունաբերության, գյուղատնտեսության, մշակույթի, ու մանավանդ՝ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ոլորտում, որտեղ համատրոեն փորձ է արվում անկախության թարրոնը վերածել համագգային թարրոնի՝: Ի՞նչ արժեն դիցուք՝ խորհրդային արդյունաբերական հսկաների «վերաբացման» բեմականացումները, որի հեյրեններով Վանաչորի քիմիական կոմբինատի և այլ շեռնարկությունների աշխարակիցներն արդեն սկսել են մոռանալ, թե «ժապավեն կրելու» արարողության միջոցով քանի՞ անգամ են բացվել և անմիջապես փակվել իրենց գոյարևման միջոցները: Կամ՝ հնարավոր է արդյոք պարիերացնել ավելի մեծ զավեչը, քան կուչը պաչրոնյաների կողմից սոված գյուղացիների գլխին կարդացվող՝ կովերի խնամքի մասին «դասախոսությունները»: Պարբերաբար նույնպիսի նմանակումներ են արչանագրվում նաև մեր մշակույթի՞, գիտության ու կրթության ոլորտներում, այսինքն՝ պերական ու հանրային կյանքի գրեթե բոլոր ասպարեզներում:

Բնական է, որ այս ամենից հեյր չեն մնում նաև Հայաստանի մարգային իշխանությունները, ինչի վկայությունն է հարազար քաղաքում իր անվանակից Վարդան Մամիկոնյանի վերհուշի արբեացումով զբաղվող Շիրակի մարգպերի կամ կիսաֆաշխարական բնույթի բեմականացումներով փարված՝ «Մյունյաց արծիվների» և ընդհանրապես՝ աննաչակ հուչարչանաշինության ու ինջույրների փեմերով դրսևորվող «մարգային շոուների» շքերթը:

Երկրի ասպագայի հանդեպ պարասիսանարվությունը անկախության թարրոնի վերածելու գործընթացը փեդասիոփակել է նաև իշխանություն-ընդդիմություն հարաբերությունների ոլորտ: Իր արարակարգ թարերական ունակությունների շնորհիվ 2008-ի նախագահական ընարություններում երկրորդ փեդը գրաված Հայաստանի առաջին նախագահ Լ. Տեր-Պեյրոյանը վերջերս անցել էր «երկխոսություն» կոչվող ներկայացմանը: Բայց մի կողմից՝ միւյանց խաբելու, իսկ մյուս կողմից՝ ժողովրդին խաբելու գործընթացը այնպես խճճեց այդ երկկողմանի խաղը, որ դերասաններից մեկը հայրևկեց «Տերն ու ծառայի» հեյրոսի վիճակում և «խիստ» բարկացավ՝ ի ցույց դնելով ողջ զավեչը:

Ավելի պարբերական բնույթ ունեցող զավեչը է դարչել ահռելի միջոցների անիմասար վարունումով մայրաքաղաքի կերպարն ադնարող Անդրանիկի և այլ հեյրոսների թարերականացվող հուչարչանաշինությունը, որի բեմադրիչները հայրենասիրությունը շիոթում են կռապաչություն հեյր: Ակնհայր նմանակում է նաև Արեմյոյան Հայաստանի կրարյան ցավը «ճամփորդական շոուների» վերածող՝ Երկիր մեկնող «առաքյալների» պահվածքը, որոնք այնքան թեթև են քայլում խոցված հայրենիքի ավերակների վրա, որ թվում է, թե փոթոում են ոչ թե մեր նահարակների անթաղ ոսկորները, այլ ինչ-որ նոր հայրենաբերած մոլորակի բլուրներ, որի արդյունքում՝ արելությանն ու վրեժի գգացմունքին աննկար կերպով փոխարինելու է գայիս չպարժված հանցագործի հեյր «երկխոսության» պարրանքը:

Եվ վերջապես՝ 20-ամյա անկախության թարրոնի փառապասկն են դարչել մեր աղբար երկրին իփսար անհրաժեչը հարյուր հազարավոր դոլարները աննպարակ նավագնացությունների վրա մսիող «Կիլիկիա» և «Արմենիա» բեմականացումները, քանզի «միջնարդարյան» առագաստանավերով կազմակերպվող նման ներկայացումները հայրենիքում փրիող վիճակից անհանգստացած Սփյուռքի մեր հայրենակիցներին առաչարկում են անցյալով հպարտանալու և ներկան մոռանալու վրանգավոր իսրկանքը:

Անկախ Հայաստանի դարավոր երազանքը անադարտ կերպով պահպանած աշխարհասփյուռ հայությունը ոչ թե պատմական, այլ իրական, հզորացող և առիներող հայրենիքով հպարտանալու սուր կարիքն ունի: Մինչդեռ, ներկայումս ո՞րն է նրա հպարտության բուն առարկան՝ օբյեկտիվ իրականությունը, թե՞ սուբյեկտիվ թատերականացումը: Եթե առաջինն է, ապա կարո՞ղ ենք այն

4 Խնդրում ենք չչփոթել մեծ դերասան Սոս Սարգսյանի գլխավորած «Յամագգային» թատրոնի հետ: 5 Ավելի մանրամասն տե՛ս «Կէմ»-ի ներկա համարում տպագրվող Ռուբեն Ս. Անգալարյանի իրապարակումը:

համեմատել բազում սերունդների կողմից սրբազնացված անկախ Հայաստանի դարավոր երազանքի հետ և փորձել որևէ էական, խորքային նմանություն գտնել իրականության և իդեալի միջև: Ամենևին՝ **անկախ Հայաստանի երազանքը ներկա անկախության թատրոնի խորք զավակն է, որին պարզապես ծաղրում են նրա աղմկոտ, բայց շինծու բեմահարթակին հայտնված ամենևին էլ՝ ո՛չ անկախական «դերասանները»:**

Անշուշտ, անկախությունն ու նրա բերած ազատություններն անպայման պետք է բացահայտեին մեզանում դարեր շարունակ ամբարված հզորագույն **թատերական լիցքերը** և նման գործընթացը ծավալվելու էր իր ողջ թափով, բայց որտե՞ղ՝ առօրյա կյանքում, թե՞ թատրոնում: Հազարամյակների ավանդույթներ ունեցող հայ թատրոնը կյանքի մեջ տեղափոխելու և այն հասարակական անհրաժեշտություն դարձնելու փոխարեն՝ ո՞մանք մեր կյանքն են վերածել թատրոնի՝ հայերիս անվիճելի թատերական արժանիքները օգտագործելով ազգին նպատակային քաղաքականության ճանապարհից շեղելու համար:

Անկախ պետականության պայմաններում ազգային քաղաքականությունը պատմության նվիրական հիշատակներով ու ազգագրական տարազներով զարդարված թատերական ներկայացում չէ, իսկ համամարդկային արժեքները՝ ընդհանուր տեսաբանման նյութ, այլ կոնկրետ նպատակների սահմանում, դրանց իրականացման հանգրվանների հստակեցում, թիրախների ճշտում:

**Արտաքին շրջափակման հաղթահարման, արտագաղթի կասեցման, ներգաղթի կազմակերպման, ազատագրված տարածքների վերաբնակեցման, պարենային անվտանգության ապահովման, կրթության, գիտության ու տեխնոլոգիաների արագընթաց զարգացման, այսինքն՝ Հայաստանի դիմադրողականության ու մրցունակության մեծացման փոխարեն մեզանում սկիզբ առած թատերական ներկայացումները վկայում են, որ երկրի կենսագործունեության առանձին ոլորտները տնօրինող կառույցներն ու անձինք դարձել են ինքնավար և ինքնաբավ, որի հետևանքով Հայաստանում աստիճանաբար սկսել են վերանալ պետության կառավարման ուղղահայացը, քաղաքական թիմերի պատասխանատվությունը, պետական և անձնական սեփականության սահմանագծերը:**

Ներկա **անկախության թատրոնը** արդյունք է այն իրողության, որ 1991-ին մեզ հռչակելով համաշխարհային թատերաբեմ վերադարձած ինքնիշխան ազգ, մենք ի գորտու չեղանք գիտակցել դրանից բխող պատասխանատվությունը և այն իրացնելու պարտադիր պայմանը՝ նպատակային քաղաքականություն որդեգրելու անհրաժեշտությունը: Արդյունքում՝ մեզ հռչակելով պատմության սուբյեկտ, աստիճանաբար հայտնվեցինք կրկին նրա օբյեկտը դառնալու իրական վտանգի առջև: Որովհետև եթե նպատակային քաղաքականության միջոցով չկարողանանք մեր կամքը պարտադրել ուրիշներին, ապա **վաղ թե ուշ** վերջիններս են իրենց կամքը պարտադրելու մեզ: Եվ մինչ օրս չենք կանգնել նման վտանգի առջև միայն ու միայն այն պատճառով, որ երբեք Հայաստանի արտաքին կացությունը չի եղել այնքան բարենպաստ, որքան վերջին 20 տարիներին: Ուրեմն՝ շարունակելով գոյատևել մեր միակ կամային քայլի՝ Ղարաբաղյան պատերազմի արդյունքների օգտագործման միջոցով, անցած 20 տարիներին այդպես էլ չենք գիտակցել անկախության իմաստը:

Ի վերջո՝ ի՞նչ է անկախությունը՝ իրավական կարգավիճակ, թե՞ մի այնպիսի **«ներքին ցնցում»**, որի միջոցով հաղթահարվում է իրականության ու երևակայութ-

յան սահմանագիծը: Քանզի երևակայել կարելի է նաև կախյալ վիճակում՝ երբ բացակայում է պատասխանատվությունը. միայն անկախը երևակայելու իրավունք չունի, քանի որ նա պատմության սուբյեկտ է, որը կանգնած է մարտահրավերների ու վտանգների առջև: Այսպիսով՝ մեր կարգավիճակով լինելով անկախ, մտածողությամբ ու նրանից բխող պահվածքով 20 տարի շարունակ ապրել ենք անցյալի թատերականացվող եղելությունների մեջ և ջնջելով դրանք ռացիոնալ պատմությունից տարանջատող սահմանագիծը, աստիճանաբար հայտնվել ենք անժամանակության գրկում: Մինչդեռ, ազգի կենդանի հիշողությունը վկայում է, որ **մենք անկախ ենք այնքանով, որքանով արտաքին ու ներքին՝ առարկայական և ենթակայական գործոնների, այդ թվում՝ մարտահրավերների հաշվառման միջոցով մշակում ու գործադրում ենք նրանց օգտագործման կամ հաղթահարման սեփական դեղատոմսերը, այսինքն՝ ունենք սեփական գործուն ծրագիրն ու դրա իրականացման ռազմավարությունը:**

Եվ եթե մինչ օրս այն չի հստակեցված, ապա որպես ազգ ու պետություն ոչ ոքից բողոքելու իրավունք չունենք: Պատմության օբյեկտը՝ ճանապարհին ընկած քարը, չի կարող բողոքել, երբ իր կամքից անկախ իրեն գործածում են որևէ մեկի գլուխը ջարդելու համար: Դեռ լավ է, որ մինչ օրս մենք ոչ թե սովորական, այլ **«տաշած քար»** ենք դիտվում, որին օգտագործում, բայց գոնե՝ առայժմ, դեռ չեն նետում, ինչը, սակայն, մեր սերնդի արժանիքը չէ, այլ Հայոց պատմության և նրա արդյունքի՝ ներկա աշխարհագրական դիրքի եզակիության հետևանքը:

Նման պայմաններում հայաստանյան քաղաքական դետերն ահագանգում են, որ արտաքին ու ներքին մարտահրավերների ահագանցման մթնոլորտում անկախ Հայաստանի պետական մավը մոտեցել է այն **բիֆուրկացիոն կետին**<sup>6</sup>, երբ մեր պատասխան ռեակցիայի բացակայության պայմաններում «...մարտահրավերների եւ վտանգների կուտակումը ի վերջո կբերի որակական տեղաշարժերի, և, բնականաբար, ի վնաս մեզ»<sup>7</sup>:

**Տեղեկանք-3:** *Որոշակի պարբերականությամբ կրկնվող բիֆուրկացիաները մեզանում պարմական պարկառելի ենթախորք ունեն, քանզի պետականության կորստից հետո մեր հանրության ներկայացուցիչները «հայ» են մնացել իրենց համայնքի և նրա գոյության պարվար եկեղեցու պարբերից ներս, իսկ դրանցից դուրս գործել են անհատական նպատակների իրացման փրոյեկտում: Եվ հենց պարբերական բնույթ սրացած բիֆուրկացիաների հետևանքով են մեզանում ի հայտ եկել վառ անհատականությունները՝ մեծ հայերը: Ուարի պարմականորեն արդեն բազմիցս բիֆուրկացված փեսակը պետականության կստեղծման մարտահրավերների ու դժվարությունների մեծացմանը զուգընթաց նորից վերադարձել է իր «հին պայրանի» մեջ, որի հետևանքով հարազատ միջավայրում նրա նոր երկարման փաստը վերածվել է **անհատական շահի** հետապնդման և **հավաքական նպատակների** թարերականացման գործընթացի:*

Իսկ Հայաստանի՝ որպես պետության բիֆուրկացիան հետևանք է այն իրողության, որ նրա գոյությունը պայմանավորող արտաքին չափորոշիչների փոփոխությունը անցած 20-ամյակում առաջ է բերել ոչ թե դրանց համապարասխանող ներքին փոխաշարժեր, այլ հանգեցրել է նմանակումային քաղաքականության **մեզամորֆոզի**՝ հանրային կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Արդյունքում սրեղծվել է իրական Հայաստանի ու նրա թարերակա-

6 Բիֆուրկացիոն կետ. համակարգի կրիտիկական վիճակ, երբ նա անկայուն է դառնում տատանումների (ֆյունկտոնացաների) հանդեպ և առաջ է գալիս անորոշություն՝ արդյո՞ք համակարգի դրոյությունը կդառնա քառային, թե՞ այն կանցնի կարգաբերման նոր, ավելի բարդ և բարձր մակարդակի: Նման երկվությունն ապահովում է փոփոխության հնարավորությունների բազմազանությունը:

7 Տե՛ս Աստղիկ Կարապետյան, Մարտահրավերները սաստկանում են, արձագանք չկա, հարցազրույց կառավարման փորձագետ Չարություն Մետրոյանի հետ, «Երկիր» օրաթերթ, Եր., 19 հուլիսի, 2011 թ., N 133, էջ 8:

*նացված ընկալման երկվությունը և դրանով պայմանավորված՝ րեդսպարույրը, որը մեզ մոտեցրել է կրիտիկական իրավիճակին՝ բիֆուրկացիոն կետին: Սակայն վերջինիս բուն էությունն այն է, որ նրան հաջորդող անխուսափելի ցնցումների արդյունքներն ամենևին էլ կանխորոշված չեն, քանզի դրանք երբեք էլ մեկ փարբերակով չեն ընթանում:*

**Եզրակացությունը պարզ է. առաջիկա տարիներին Հայաստանում փոփոխություններն անխուսափելի են, բայց դրանց՝ ի վնաս մեզ լինելու մասին «դատավճիռը» հակասում է «բիֆուրկացիոն կետ» հասկացության բովանդակությանը և ուսանելի է միայն իբրև այսպես շարունակելու դեպքում սպասվող հեռանկարի մասին ահազանգ:**

Ավելի քան ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին հաջորդող 2012-2013 թթ. ընտրաշրջանը և նույն տարիներին մեր երկրի շուրջն անխուսափելի դարձող աշխարհաքաղաքական լրջագույն մարտահրավերները ներքնապես երկատված հայ հանրույթին ու Հայաստան պետությանը կանգնեցնելու են բիֆուրկացիոն կետի առջև, երբ համակարգն անկայուն է դառնում ներքին ու արտաքին տատանումների հանդեպ, որոնց առկայության պայմաններում ազատությունը վերածվում է վիրտուալ այլընտրանքների միջև ընտրություն կատարելու հնարավորության:

Նման կանխատեսման համար բոլոր հիմքերն ունենք. իր նախորդի համեմատ գործող իշխանությունն ավելի թույլ է, կառավարման ուղղահայացը սկսել է սահմանափակվել նախագահական պալատից այն կողմ ծավալվող ապակենտրոն թատերախաղերով, որոնցում լայնորեն ներգրավված խորհրդային պետական ապարատի մնացուկները կորցրել են իրականության զգացողությունը. վերևում **Ֆարս** է, իսկ ներքևում՝ **ողբերգություն**:

Ուստի անկախության 20-ամյակը բոլորած Հայաստանի ապագայի ճշգրիտ կանխատեսման համար այսօրվանից հարկ է հրաժարվել գծային մտածողությունից և երկրի ներսում ու նրա շուրջը կուտակվող և՛ ներքին, և՛ արտաքին մարտահրավերները դիտարկել որպես մեկ ամբողջություն՝ **Ժամանակի մարտահրավեր**: Եվ այն խորապես ընկալելու համար հարկ է խուսափել ներկա **անկախության թատրոնի** ընդհանուր հունի մեջ տեղավորվող հապշտապ քայլերից: Այսպես՝ «Արարատի նվաճման»՝ մեզանում լայնորեն բեմականացվող ներկայացման փոխարեն կարիք չկա վերցնել եռագույնն ու բարձրանալ աշխարհի ամենաբարձր լեռան՝ Ջոնոլունգմայի գագաթը՝ մեր «անսահման» հայրենասիրությամբ «տիրեթյան իմաստուններին» զարմացնելու համար: Կարիք չկա նաև ավելորդ կերպով նյարդայնանալ մեր աչքի առջև բեմականացվող արտորդից, որն իրականում **համակարգային ճգնաժամի** արտահայտություն է: Կարծում ենք՝ ժողովրդի հիմնարացման և պետության ապակողմնորոշման տեխնոլոգիաների հակաթույնը «տիրեթյան իմաստունների» այն կանխադրույթն է, որ մարդկանց բաժին ընկած տանջանքների պատճառը նրանց անմիտ գործողություններն են, որոնք դադարեցնելու համար նախ՝ հարկավոր է հոգեպես հանգիստ զգալ՝ լիցքաթափվելով ավելորդ լարվածությունից: Նման կարճատև **նիրվանան** մեզ անհրաժեշտ է՝ ճշգրիտ որոշումներ կայացնելու համար, որից հետո 20 տարի շարունակ բիֆուրկացված երկիրը նորմալ գոյավիճակի վերադարձնելու համար վերնախավային մակարդակի **անկախության թատրոնը** պետք է վերածել բուն իմաստով՝ **հայ թատրոնի**, այսինքն՝ «դերասանների» խաղին «հանդիսատեսի» կենդանի ներկայության միջոցով երկկողմանիորեն վերապրվող բեմականացման:



Որովհետև համաձայն ծիծաղի ժանրի մեծագույն գիտակ Մ. Բախտինի՝ «Դիմակահանդեսի ժամանակ կարելի է ապրել միայն նրա օրենքներով, այսինքն՝ դիմակահանդեսային ազատության օրենքներով»<sup>8</sup>: Իսկ նույն միտքը խորացրած ակադեմիկոս Ս. Ավերինցևի կարծիքով՝ ծիծաղն իրականում ազատություն չէ, այլ **ազատագրում**, քանզի նրա «կոնկրետ փորձը ստիպում է մեզ վերաապրել անազատության այն հատուկ պահերը, որոնք յուրահատուկ են հենց ծիծաղի համար»<sup>9</sup>:

Ուրեմն՝ ներկա կացության ողջ **գրոտեսկայնությունն** ըմբռնելու համար մեր օրգանիզմը **նախ**՝ իրեն խիստ անիրաժեշտ և բուժիչ քայլի՝ առողջացնող ծիծաղի կարիք է զգում, երբ ճշմարտության բանական փնտրտուքը խառնվելով հուզականի հետ՝ բերում է էլ ավելի բուռն հուզականության պոռթկմանը, ինչը կարող է դառնալ հանրային օրգանիզմի ներքին երկատվածության՝ բիֆուրկացիայի հաղթահարման սկիզբը:

**Երկրորդ** կամ՝ բանական քայլը պետք է լինի այն **ապացուցված իրողության** գիտակցումը, որ խորհրդային շրջանից գրեթե անփոփոխ մնացած Հայաստանի պետական մեքենան՝ **ապարատը**, մեզ 20 տարի շարունակ **անկախության թատրոն** է բեմականացնում, որովհետև ինքն այդ ողջ ժամանակամիջոցում շարունակել է մնալ անկախ պետականության հետ որևէ կապ չունեցող արժեքների ու նպատակների դաշտում: Ուստի ազգային կամ համամարդկային ինչպիսի վեհ նպատակ էլ դնենք նրա առջև, միևնույն է, իրականացման փոխարեն դառնալու ենք **դրա շուրջը** բեմականացվող հերթական թատրոնի ականատեսը: Նման ապարատի առկայության պարագայում բոլոր ծրագրերն ու ջանքերն ավելորդ են, ուստի նրանից ազատվելու՝ հասունացած և պարտադիր խնդիրը լուծելու համար ծիծաղից հետո սթափված հասարակությունը պետք է մտածի վաղն ազգովին **լաց չլինելու** մասին:

2012-2013 թթ. ընտրաշրջանը մեր լավագույն հնարավորությունն է, երբ բոլոր առարկայական գործոններն այլևս հասունացել են, և մնում է միայն որոշել, թե ովքե՞ր են մարմնավորելու հասարակությանն իր հետևից տանող ենթակայական գործոնը և ամենակարևորը՝ ու՞ր են տանելու նրան, քանզի բիֆուրկացիոն կետում հայտնված համակարգի հետագա ընթացքն ուղղորդելու հարցում **կամային որակները** ճակատագրական նշանակություն են ստանում...

Ծիծաղով ցնցվելու և սթափվելու առաջարկը ոչ թե մեր **Սուրբ Հայրենիքը** ծաղրելու, այլ ազգովին մաքրվելու և նրան արժանի լինելու նպատակադրում է: Մեր նախնիները դարերով անկախ Հայաստան են երագել՝ նրանում ազգի ապագան հավերժացնելու և ոչ թե ներկան թատրոնի վերածելու համար: Եվ երբ այսօր հայաստանյան քաղաքական թատրոնի «դերասանները» զավեշտի են վերածում ազգային հիշողության սրբազնացված տարածքը՝ **Հայաստանի անկախության երազանքը**, նրանք քանդում են նույնիսկ այն հիմնաքարը, որի վրա դարեր շարունակ գոյատևել է պետականագուրկ ազգը:

Իսկ երկրորդից զրկվելու և այդպես էլ առաջինին չհասնելու պարագայում կանգնելու ենք պատմության վերջին էջը փակելու վտանգի առաջ: Ուրեմն՝ մեր սերունդը պարտավոր է գիտակցել, որ պետականության մարտահրավերը

8 Бахтин М. Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и ренессанса <http://www.philosophy.ru/library/bahtin/rable.html>  
9 Аверинцев С., М.М. Бахтин как философ. М., «Наука», 1992, с. 8.

վերջնականապես տանուլ չտալու համար վրա է հասել **ազգային դարավոր երազանքը** ներկա **անկախության քատրոնից** տարանջատելու ժամանակը: Եվ որպեսզի այսուհետև թույլ չտանք, որ ծիծաղեն մեր մեծ երազանքի վրա, ինքներս պետք է ազգովին ծիծաղենք **անկախության քատրոնի** «դերասանների» վրա և հայտարարենք, որ **սա մեր երազած անկախ Հայաստանը չէ**: Միայն **զավեշտի ու ողբերգության** նման խորքային վերապրումից ծնունդ կառնի այն հաղթահարելու **հասարակական անհրաժեշտության** ամբողջական գիտակցումը:

Ելնելով այս նպատակադրումից՝ «ՎԷՄ» հանդեսի ներկա համարում մեծ տեղ է հատկացվել համակարգային ճգնաժամի մեջ հայտնված Հայաստանի Հանրապետության առջև կանգնած մարտահրավերների ընկալման երկու մակարդակներին՝ իրավիճակի ինչպես **ռացիոնալ**, այնպես էլ **իրացիոնալ-գրոտեսկային** իմաստավորմանը, ինչը մեր **ենթագիտակցության** մեջ պահպանված՝ ազատության բնածին ձգտումներն արթնացնելու լավագույն միջոցն է:

Խմբ.

## The Twenty Year Odyssey of the National Dream in the Drama of Independence

Editorial